ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ԱՄՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՄՆ-ի հայկական գաղութը հիմնադրվել է XIX դ. 80-ական թվականների վերջերին։ Նրա պատմությանն առաջինը 1919 թ. անդրադարձել է Մ. Վարդան Մալքոմը[1], իսկ վերջերս՝ 1983 թ., Ռոբերտ Միրաքը[2]։ Սովետահայ պատմաբաններից ամերիկահայ գաղութի պատմության առանձին հարցերով զբաղվել են Ա. Աբրահամյանը[3], Դ. Սրապյանը[4] և Մ. Տեր-Գրիգորյանը[5]։ Սակայն գաղութի և հատկապես նրա հիմնադրման պատմությունը դեռևս կարիք ունի լուրջ և ամբողջական հետազոտման։ Հենվելով մինչև այժմ հայտնի փաստաթղթերի, գրականության, մամուլում եղած նյութերի վրա, շրջանառության մեջ դնելով մի շարք նոր վավերագրեր, փորձենք ինչ-որ չափով լրացնել այդ բացը։

1618 կամ 1619 թ. Ամերիկա մեկնած առաջին հայը ոմն «Մարտին Հայն» է, որին կոչել են նաև «Ջոն Մարտին Պարսիկ»։ Վերջինս եղել է Վիրջինիայի գաղութի կառավարիչ Ջորջ Յարդլիի սպասավորը[6]։ Ամերիկայում բնակություն հաստատած հայերի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է երկու հայ շերամապահների, որոնք 1653 թ. Վիրջինիայի գաղութի հայտնի դեմքերից մեկի՝ սըր Էդվարդ Դիքսի ծախսով եկել են Ամերիկա՝ այնտեղ շերամապահական տնտեսություն հիմնելու համար[7]։

Հայերի արտագաղթը դեպի Ամերիկա սկսվում է XIX դ. կեսերից և կապված է ամերիկյան միսիոներների գործունեության հետ, որոնք քրիստոնեության պատգամները տարածելու և տեղական բնակչությանը «քաղաքակրթելու» համար թափանցում էին Արևմտյան Հայաստան։ 1810 թ. հունիսի 10-ին Բոստոնում ստեղծվում է «Օտարերկրյա առաքելության ամերիկյան միսիոներական ընկերություն», կրճատ՝ «Պորտ», որը 9 տարի անց որոշում է Թուրքիան ընդգրկել իր գործունեության ոլորտը։ Թուրքիայում նման գործունեության ծավալումը կապված էր Օսմանյան կայսրությունում ապրող միլիոնավոր քրիստոնյաների հետ։ Հարկ է նշել, որ միսիոներների գործունեությունը չէր սահմանափակվում միմիայն քարոզչական նպատակով, այլ հող էր նախա-

---

[1] M. V. Malcom, The Armenians in America, Boston, 1919.

[2] R. Mirak, Torn between two lands: Armenians in America 1890 to World War I, Cambridge, Mass, 1983.

[3] *Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967։*

[4] *Դ. Պ. Սրապյան, ԱՄՆ-ի հայ գաղութի պատմությունից, (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1973, №2)։*

[5] *Մարիամ Տեր-Գրիգորյան, Հարավային և Արևելյան Եվրոպայից։ ԱՄՆ կատարած ներգաղթը (XIX դ. վերջ-XX դ. 60-ական թվականներ), (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններից», 1982, № 5)։*

[6] „The Records of the Virginia Company of London—The Court Book" ed. by Susan M. Kingsbury Wash, 1906 vol. I, II; A. Brown, The First Republic in America, Boston—New York, 1898, p. 554; „Ararat", New York, 1968, Spring, vol. IX, №1—1, p. 9—11; „The Armenian Review", Boston, 1975, vol. 28, №3 -III, p. 230—236;

[7] E. Eggleston, The Beginners of a Nation, New York-London, 1927, p. 78 Ph. A. Bruce, Economic History of Virginia in the XVII century, New York-London, 1907, vol. 1, p. 365.

պատրաստում ուժեղացնելու Ամերիկայի տնտեսական ու քաղաքական ազդեցությունը Թուրքիայում, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանում։

Հայերի շրջանում այս ընկերության գործունեությունը սկիզբ է առնում 1822 թ., երբ Մալթա կղզում հիմնադրվում է հայերի համար առաջին կայանը, բացվում է առաջին ուսումնարանը և առաջին տպարանը, որտեղ տպագրվում են հայերեն լեզվով գրքեր[8]։ Հետագայում սրանց գործունեության կենտրոնը տեղափոխվում է նախ Զմյուռնիա, ապա՝ Կ. Պոլիս։ Ամրապնդելով դիրքերը Կ. Պոլսում, ընկերությունն իր գործունեությունը տարածում է երկրի խորքերում և հետագա մի քանի տասնամյակի ընթացքում աստիճանաբար ընդգրկում ասիական Թուրքիայի ամբողջ հյուսիս-արևելյան մասը։

XIX դ. 30-ական թվականներից սկսած ամերիկյան միսիոներների գործունեությունը նոր թափ է ստանում։ Այն պայմանավորված էր 1830 թ. ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև առևտրական առաջին պայմանագրի կնքմամբ։ Համաձայն այդ պայմանագրի, Միացյալ Նահանգներն Օսմանյան կայսրությունում ձեռք են բերում զգալի արտոնություններ։ Իր ազդեցությունը տարածելու նպատակով ԱՄՆ-ը հենց սկզբից ընտրում է երկու ուղղություն՝ տնտեսական և գաղափարական։ Տնտեսական ներթափանցումն իրականացվում էր առևտրական բուրժուազիայի միջոցով, իսկ գաղափարականը՝ եկեղեցու[9]։ Միսիոներական հատուկ կենտրոններ են հիմնվում Տրապիզոնում (1835), Էրզրումում (1839), Այնթափում (1849), Տիգրանակերտում (1850) և Խարբերդում (1852)։ 1869 թ. Թուրքիայում արդեն հաշվվում էին ամերիկյան բողոքական 185 դպրոցներ, իսկ 1890 թ.՝ 464 տարրական, 18 իգական, 26 միջնակարգ դպրոցներ և 5 կոլեջներ[10], որոնք ամերիկյան ազդեցությունը տարածելու լավագույն կենտրոններ էին։ Այդ հաստատություններում ուսուցումը ձրի էր կամ վարձը շատ չնչին էր։ Ամերիկյան բողոքական ընկերության միսիոներները հնարավոր ամեն միջոցի դիմում էին, որպեսզի բողոքականության տարածմամբ թուլացնեն հայոց եկեղեցին։ Այդ քաղաքականությունը լիովին համընկնում էր սուլթանական իշխանությունների հետամտած նպատակներին և, բնականաբար, խրախուսվում և աջակցության էր արժանանում նրանց կողմից։

Սկզբնական շրջանում ԱՄՆ էին մեկնում հիմնականում երիտասարդները, որոնք ուսանելու էին գնում բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մեծ մասամբ հայրենիք վերադառնալու միտումով։ Այդ նպատակով ԱՄՆ մեկնած առաջին հայը պոլսեցի Խաչատուր Ոսկանյանն էր, որը 1834 թ. գնացել է Նյու Յորք, ուսանել ու հմտացել լրագրության ասպարեզում, վարել զանազան պաշտոններ, հրատարակել անգլերեն լեզվով գիրք, թերթ[11]։ Նա մտադրվել էր նաև Վիրջինիայում հիմնել քաղաք՝ զուտ հայ բնակչությամբ։ «Cincinnati Enquire» թերթի 1870 թ. հունվարի 10-ի համարում հաղորդվում է երկու հայերի կողմից (մյուսը ամերիկահայ մտավորական Մ. Թոփհանալյանն է) Վիրջինիայի Ռիչմոնդ քաղաքում հող գնելու մտադրության մասին։ Ի. Ոսկանյանը նույնիսկ նախագծում է ապագա նոր Անի քաղաքը, նշում փողոցների անունները՝ Վան, Մուշ, Զեյթուն, Կարին։ Սակայն ամերիկյան կառավարությունը հավանություն չի տալիս այդ նախագծին և նրա ցանկությունը մնում է իբրև երազանք։

Սենեքերիմ Տեր-Մինասյանն առաջին հայն էր, որը 1837 թ. մեկնելով Ամերիկա, ուսանեց բժշկություն։ Թեև նա իր «ուսումը սկսում է կրոնից, սա-

---

8 Е. К. Саркисян, Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972, с .193.

9 Նույն տեղում, էջ 192։

10 А. Д. Желтяков, Ю. А. Петросян, История просвещения в Турции (конец XVIII—начало XX вв.), М., 1965, с. 137.

11 Մուշեղ Եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցույց, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 16—22, Վ. Գ. Ղուկասյան, Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, Երևան, 1975, էջ 97—147։

կայն վերջացնում է բժշկությամբ, իր անկրոն կենցաղով ցավագին հուսախաբություն մը պատճառելով մինիոներներուն»[12]։ 1845 թ. ԱՄՆ է մեկնում Սերոբ Ալիշանը՝ Ղեոնդ Ալիշանի եղբայրը, որը մի որոշ ժամանակ բնակվում է նախ Վաշինգտոնում, ապա՝ Բոստոնում։ Այդ առթիվ Ղեոնդ Ալիշանը 1846 թ. գրում է «Առ Հարազատն իմ ծովաշուեալով յԱմերիկա» բանաստեղծությունը[13]։ «1848—1865 թվականներին հայերի Ամերիկա գնալու նպատակը,— գրում է «Մշակը»,— կրթություն ստանալն էր։ Այս շրջանին մեջ հայ երիտասարդներ հոս եկան աստվածաբանություն կամ բժշկություն ուսանելու, որպեսզի վերադարձին գործեն Մայր Հայրենաց բարոյական և ֆիզիկական վերածնության համար»[14]։ Սակայն շուտով ակնհայտ է դառնում, որ շատ հայ երիտասարդներ չէին վերադառնում հայրենիք՝ կատարելու իրենց կրոնական կամ էլ կրթական պարտականությունները։ 1850—1870 թթ. 55 հայ է ոտք դնում Միացյալ Նահանգներ՝ ուսանելու նպատակով[15]։

XIX դ. վերջերին, կապված Արևմտյան Հայաստանում տիրող տնտեսական և քաղաքական ծանր դրության հետ, գաղթողների թիվը սկսում է ստվարանալ։ «Կասկած չկա,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ միայն ծայրահեղ աղքատությունն է հարկադրում մարդկանց թողնել հայրենիքը» և «որքան ավելի հետամնաց է երկիրը, այնքան նա ավելի է տալիս անուս, «սևագործ» գյուղացիներ»[16]։ Ակնհայտ է, որ մինչև 1894—1896 թթ. կոտորածները հայերը, որոնք մեկնում էին Ամերիկա, հիմնականում գաղթականներ չէին, այլ պանդուխտներ, որոնք ժամանակավորապես գաղթում էին օտար երկրներ՝ աշխատանք և վաստակ որոնելու նպատակով՝ հետո հայրենիք վերադառնալու հույսով։ Սակայն դեռևս 1886 թ. «Արձագանքը» նշում էր, որ «հայ երիտասարդությունը յուր հուսո աստղն Ամերիկայի երկնակամարի տակ նշմարելով, գունդ առ գունդ կերթա Ամերիկա, ուր կթազվի ողջ-ողջ... հայ ազգի գերեզմաններեն մին ալ Ամերիկան կլինի»[17]։ Ամերիկա գաղթելու տրամադրությունն ավելի ուժեղ էր Հայաստանի այն շրջաններում, որոնցում կային միսիոներներ կամ միսիոներական հաստատություններ էին հիմնադրված[18]։

Դեռևս 1852 թ. Խարբերդում հաստատված ամերիկյան «Պորտ» միսիոներական ընկերությունը և 1878 թ. նրա հիմնադրած «Եփրատ» կոլեջը խթանեցին խարբերդցիների մասսայական արտագաղթը։ Արտագնացությունը Խարբերդից նորություն չէր. սերնդե-սերունդ հայերը Խարբերդի քաղաքներից և գյուղերից գաղթում էին Զմյուռնիա, Կ. Պոլիս, Աղանա, Բաքու, Թիֆլիս, ուր աշխատում էին որպես բեռնակիրներ, ծառաներ, գրկիրներ։ Արտագաղթի պատճառները բազմազան էին։ Ընդարձակ ու հարուստ այդ հարթավայրը խիստ գերբնակեցված էր։ Բնակչության աճի հետևանքով ապրուստի պայմանները սկսեցին ավելի դժվարանալ. «այն ատեն երիտասարդ թե ամուսնացած մարդիկ՝ ամերիկյան միսիոնարներու դրախտային նկարագրություններեն հրապուրված-թողեցին իրենց ծնողք և ընտանիքը, ամեն վտանգ աչքի առաջ ուղղվեցան Ամերիկա»[19]։ Խարբերդի հայ բնակչությունը «գրավում էր [հայ] գաղթականության առաջին աստիճանը ողջ Ամերիկայի մեջ նաև այն պատճառով, որ միսիոներականությունը ավելի խոր արմատ ձգած էր հիշյալ վայրերուն մեջ»[20]։ 1891 թ. նույն միտքն էր հայտնել Նյու Յորքում լույս տեսնող «Հայք» հանդեսը, որտեղ նշվում էր, որ «Խարբերդի այդ ամերիկյան կրթության երի-

---

12 «Հանդես ամսօրյա», 1898 № 1։

13 «Բազմավեպ», 1904, № 3, Ղ. Ա լ ի շ ա ն, Նուագք, հ. II, Վենետիկ, 1885, էջ 34—39։

14 «Մշակ», 1906, № 173։

15 „The Armenian Review", Boston, 1975, Autumn, vol. 28, №3—111, p. 239.

16 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկ, հ. 24, էջ 112։

17 «Արձագանք», 1886, № 42։

18 «Արշալույս», տարեգիրք, Ֆրեզնո, 1922, էջ 51։

19 Լ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, Ամերիկահայը երեկ և այսօր, Բեյրութ, 1973, էջ 12։

20 «Արշալույս», տարեգիրք, Ֆրեզնո, 1922, էջ 51։

տասարդները օրինակ տվին անկե բողոքական հասարակության նվազ կրթյալ դասին բռնելու գաղթի ճամփան։ Առաջին անգամ մի քանի կաշեգործներ գնացին Ամերիկա, որոնց ետ բերած 200—300 ոսկին մեծ բախտ համարվեցավ իրենց հայրենակիցների համար։ Այլ սկիզբ դրվեց ժողովրդական պանդխտության։ Ասկե ետք դոլարների մեկ մասի խարբերդ հասնիլը զարկ տվավ լուսավորչական թե բողոքական, մեծ թե փոքր խարբերդի քաղաքացու և գյուղացու շարժման, պանդուխտի մը իր եղբայր կամ ազգականին Ամերիկա կանչեր՝ գրգիռ տվավ բոլոր դրացիներին և գյուղացիներին»[21]։ Ամերիկայի մեջ խարբերդի գաղթականությունը օրըստօրե ավելանում է. մինչև 1880-ական թվականները 1000 հոգի գաղթել էին և գաղթը գեռ շարունակվում էր[22]։ Ցավալի էր տեսնել, որ «Ամերիկա պանդխտելու տենդը համաճարակի պես տարածվում է նաև խարբերդի շրջակա գավառները՝ Բալու, Մալաթիա, Ակն, Չմշկածագ»,— գրում էր «Արձագանքը»[23]։

Հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչները դեմ էին հայերի արտագաղթին։ Այդ են վկայում XIX դ. վերջերին մամուլում լույս տեսած բաղում հոդվածները։ Դրանց հեղինակները նշում էին, որ «անհրաժեշտ է սթափեցնել ժողովրդի այն խավար մասը, որը հափշտակվելով երևակայական խոստումներով, թողնելով իր երկիրը, տուն ու տեղը՝ անդադար գաղթում է Ամերիկա»[24]։ Այդ իսկ պատճառով, ամեն մի լուրջ տպագրական խոսք, որի նպատակն է ցույց տալ պանդուխտի վիճակը իր իսկ գույներով, գրում էր «Մշակը», «պետք է ընդունենք երախտագիտությամբ, աչքի առջև ունենալով, որ այդ տեսակ տպագրությունները զգուշացնելով ամբոխի միամիտ մասին, գաղթականության անտեղի և վնասակար հոսանքի առաջը կառնեն»[25]։ Նման օգտավետ երևույթներից պետք է համարել Կ. Բարակյանի «Լույս և խավար» փոքրածավալ գրքույկը։ «Մշակն» անդրադարձել է այդ գրքույկին։ Նրա հեղինակը հայերին խորհուրդ է տալիս չխաբվել երազական հույսերով, չքել իրենց հայրենիքն ու ծննդավայրը և չգաղթել իրենց համար բոլորովին անհայտ մի երկիր, «որի կյանքի պայմանների հետ անծանոթ լինելով, անտարակույս, ընկնելու են արդեն մյուս գաղթականների մեծ մասի նման ետին չքավորության և հուսահատ նյութական վիճակի մեջ»[20]։

1834—1868 թթ. ԱՄՆ-ի ֆինանսների մինիստրությունը որպես աշխարհագրական հասկացություն օգտագործում էր «եվրոպական Թուրքիա» անվանումը, նկատի առնելով սիրիացիներին, բուլղարներին ինչպես նաև հայերին, որոնք Ամերիկա էին գաղթում Օսմանյան կայսրությունից։ Այդ ժամանակահատվածում ԱՄՆ գաղթածների թիվը կազմել է 253 մարդ, որոնցից հավանաբար 100-ը հայեր են եղել[27]։ Սկսած 1869 թ. ԱՄՆ-ի ֆինանսների մինիստրությունը «եվրոպական Թուրքիա» աշխարհագրական հասկացությանն ավելացնում է «ասիական Թուրքիա» և «Հայաստան» հասկացությունները։ 1869—1890 թթ. Հայաստանից (արևմտյան) Ամերիկա էր գաղթել 981 հայ[28]։ Ինչ վերաբերում է «ասիական Թուրքիայից» գաղթածներին, ապա այն կազմել է 2289 մարդ, որոնցից 400-ը, ենթադրվում է, հայեր էին[29]։ Իսկ «եվրոպական Թուրքիայից» մեկնածների թիվը կազմել էր 1923, որոնցից միայն 20-ն էր հայ[30]։ Փաստորեն, ընդհանուր առմամբ 1869—1890 թթ. ԱՄՆ է գաղթել 1401

---

21 «Հայք», 1891, № 23։

22 «Արաքս», Պետերբուրգ, գիրք Ա, 1888, էջ 35։

23 «Արձագանք», 1892, № 101։

24 «Մշակ», 1891, № 47։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում։

27 M. V. Malcom, նշվ. աշխ., էջ 64; R. Mirak, նշվ. աշխ., էջ 288:

28 R. Mirak, նշվ. աշխ., էջ 287—291:

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում։

հայ։ 1891—1895 թթ. Հայաստանից և «ասիական Թուրքիայից» ԱՄՆ էր գաղթել 13943 մարդ, որոնցից 5500-ը ենթադրվում է, որ հայ է եղել[31]։

Հայերի մասսայական գաղթը դեպի ԱՄՆ սկսվում է 1894—1896 թթ. կոտորածներից հետո։ «Թուրքաց Հայաստանում ստեղծված տնտեսական և քաղաքական անտանելի պայմանների և քրդական հրոսակների արդյունք է այն մեծ գաղթականությունը, որ տարիներից ի վեր սկսված է այդ երկրից, մի գաղթականություն, որի ծայրերը հասնում են ոչ միայն Կովկաս, այլև օվկիանոսի այն կողմերը-մինչև Ամերիկա»,— գրում էր «Մշակը»[32]։

1895 թ. սկսած նկատվում է ԱՄՆ գաղթողների զգալի աճ։ 1895—1898 թթ. Թուրքիայից ԱՄՆ գաղթածների թիվը կազմել է 15913 մարդ[33]։ Չնայած զեկուցագրերում չի նշվում գաղթողների ազգային պատկանելությունը, բայց կասկածից վեր է, որ նրանց մեծ մասը հայեր էին։ «Այս շրջանում,— գրում էր «Մշակը»,— հայը գնում էր Ամերիկա կենաց շունչ առնելու։ Գնում էր թե՛ հարուստը, թե՛ աղքատը, թե՛ գիտունը, թե՛ տգետը»[34]։

Սկսած 1899 թ. ԱՄՆ-ի ֆինանսների մինիստրության վիճակագրական, իսկ հետագայում ներգաղթի և հպատակագրման բյուրոները սկսում են հաշվի առնել ոչ միայն արտագաղթողի երկիրը, այլև ներգաղթողի ազգային պատկանելությունը։ Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռում ճշտելու ներգաղթող հայերի քանակը։ 1899—1907 թթ. ԱՄՆ է գաղթել 14583 հայ, իսկ 1908—1910 թթ.՝ 11915[35]։ Հարկ է նշել, որ գաղթողների մեծ մասը՝ 10441 մարդ, ԱՄՆ էր մեկնել Արևմտյան Հայաստանից։ «Ամերիկան,— գրում էր «Մշակը»,— ցավ ու պատուհաս եղավ Թուրքահայերի համար. իր տված «բարիքներին» հետ նա միաժամանակ անբուժելի վերքեր բացավ Թուրքահայ արդեն վատառողջ օրգանիզմի վրա, հայ գյուղացիությունը, որ իր պատմական դժոխք հայրենիքում միշտ ամուր փարած էր իր ծնող-հողին, ներկայիս խորթ աչքով է նայում նրան։ Արտագաղթը մի տեսակ անհարազատություն առաջ բերեց նրա մեջ՝ դեպի իր ծննդավայրը. «պապերի գերեզմանները»։ «հայրենի օջախը» և այլ ավանդական սրբությունները կորցրել են նրա համար նախկին հմայքի ազդեցությունը։ Եվ դատարկվում է Թուրքահայաստանը»[36]։ Արևմտահայերի արտագաղթի ուժեղացումը պայմանավորված էր նաև նրանով, որ 1908 թ. Թուրքիայում սահմանադրության հռչակումից հետո հայերը քիչ թե շատ ազատ երթևեկելու իրավունք ստացան։ Նրանք կարող էին մեկնել ոչ միայն գյուղից գյուղ կամ քաղաք, այլև արտասահման[37]։ Սակայն սահմանադրության հռչակումից հետո էլ Օսմանյան կայսրության բոլոր մասերում պահպանվեցին անձի ու գույքի անապահովությունը, ազգային հալածանքը, հարկային հարստահարումներն ու ճնշումները։ Միաժամանակ, սահմանադրության հռչակումից հետո հայ պանդուխտների մի չնչին մասը, փայփայելով որոշակի հույսեր, վերադարձավ հայրենիք։ Ադանայի կոտորածը առաջին սոսկալի հիասթափությունն էր, որ «հետ մղեց պանդուխտների սրտերը օսմանյան բարբարներից, իսկ հետո ոչինչ ուրախառիթ լուրեր չեկան մայր երկրից»[38]։ Այս շրջանում ԱՄՆ էին գաղթում ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև Կովկասից, մասնավորապես՝ Շիրակից։ «Շիրակի և Փամբակ գյուղերի երիտասարդները այս երրորդ տարին է, որ խումբ-խումբ գնում են Ամերիկա»,—

---

31 Նույն տեղում։

32 «Մշակ», 1894, № 28։

33 „Reports of the Immigration Commission", Statistical Review, v. III (այսուհետև „Reports..."), Wash., 1911, p. 39—40.

34 «Մշակ», 1906, № 173։

35 „Reports...", p. 45.

36 «Մշակ», 1914, № 50։

37 Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազգային շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 43։

38 «Մշակ», 1911, № 157։

գրում էր «Մշակը»[39]։ Շիրակից Ամերիկա առաջին գաղթողները եղել են Կարսի շրջանի Ղարաղալու գյուղի բնակիչները։ Գաղթի մասնավոր դեպքեր նկատվել են XX դ. սկզբներից, բայց ընդհանուր շարժումը դեպի Ամերիկա սկսվել է 1908—1914 թթ.[40]։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը մոտավորապես 2500 հայ է ԱՄՆ գաղթել ռուսական կայսրությունից[41]։ Գաղթածները հիմնականում երիտասարդներ էին, ընտանիքի տեր, բայց մեկնել էին առանց ընտանիքի։

Հայերը XIX դ. 90-ական թվականների վերջերից դեպի ԱՄՆ էին գաղթում ոչ միայն Հայաստանից, այլև ասիական ու եվրոպական մի շարք երկրներից, որոնցում նրանք հաստատվել էին ավելի վաղ շրջաններում։ Համաձայն ԱՄՆ-ի ներգաղթի վիճակագրական բյուրոյի տվյալների, 1899—1910 թթ. հայեր են արտագաղթել Եվրոպայի տարբեր երկրներից՝ Ավստրո-Հունգարիայից՝ 12, Բելգիայից՝ 10, Բուլղարիայից՝ 95, Գերմանական կայսրությունից՝ 20, Թուրքիայի Եվրոպական մասից՝ 1267, Իսպանիայից՝ 5, Իտալիայից՝ 24, Հունաստանից՝ 109, Մեծ Բրիտանիայից՝ 411, Շվեդիայից՝ 1, Շվեյցարիայից՝ 10, Պորտուգալիայից՝ 1, Ռումինիայից՝ 69, Ռուսաստանից՝ 663, Ֆրանսիայից՝ 160 և եվրոպական այլ երկրներից՝ 2 հոգի[42]։

Այսպիսով, եթե 1899—1910 թթ. Եվրոպայի զանազան երկրներից 2865 հայ էր գաղթել ԱՄՆ, ապա 1911—1917 թթ.՝ 4922, այդ թվում նաև Նորվեգիայից և Հոլանդիայից[43]։ Ասիայից ԱՄՆ արտագաղթած հայերի թիվը 1899—1910 թթ. կազմել է 22658[44], իսկ 1911—1917 թթ.՝ 21203[45]։ Ընդ որում, միայն Թուրքիայի ասիական մասից 1899—1910 թթ. ԱՄՆ է գաղթել 22561[46], իսկ 1911—1917 թթ.՝ 21107 հայ[47]։ Մյուս աշխարհամասերից՝ Աֆրիկայից, ամերիկյան մայր ցամաքից 1899—1910 թթ. ԱՄՆ է մեկնել 975 հայ[48], իսկ 1911—1917 թթ.՝ 2434 հայ[49]։ Փաստորեն, 1899—1910 թթ. ԱՄՆ մեկնած հայերի թիվը կազմել է 26498[50], իսկ 1911—1917 թթ.՝ 28559[51]։

1899—1911 թթ. ԱՄՆ արտագաղթած 29590 հայերից 3180-ը ուներ 14 տարեկանից ցածր հասակ, իսկ 45 տարեկանից բարձր տարիք ունեցողների թիվը կազմում էր 1189[52]։ Ակնհայտ է, որ հիմնականում ԱՄՆ էին մեկնում 14—44 տարեկանները (25221 հոգի)[53], որոնք կարող էին իրենց աշխատանքով ապրուստ հայթայթել և օրական «10—12 ժամ չարաչար քրտնաջան աշխատել գործարաններու մեջ»[54]։ 1899—1910 թթ. ԱՄՆ մեկնած 29590 հայերից 22925-ը կամ 76,5 %-ը տղամարդիկ էին, իսկ 6665-ը կամ 23,5 %-ը կազմում էին կանայք[55]։ Փաստորեն հայ գաղթականությունը բաղկացած էր մեծ մասամբ ամուրի երիտասարդներից և «անոնք որ կանամբի են, զավակ, կին թողած են

39 Նույն տեղում, 1913, № 66։

40 Ս. Գալոյան, Շիրակի հայերի գաղթը դեպի Ամերիկա, Լոս Անջելոս, 1950, էջ 78։

41 B. Mirak, նշվ. աշխ., էջ 58:

42 „Reports...", p. 53—83.

43 M. V. Malkom, նշվ. աշխ., էջ 67:

44 „Reports...", p. 70—72.

45 M. V. Malcom, նշվ. աշխ., էջ 67:

46 „Reports...", p. 71.

47 M. V. Malcom, նշվ. աշխ., էջ 67։

48 Reports...", p. 73—82.

49 M. V. Malcom, նշվ. աշխ., էջ 67։

50 „Reports...", p. 45—46.

51 M. V. Malcom, նշվ. աշխ., էջ 67։

52 „Reports...", p. 89—91.

53 Նույն տեղում։

54 Ե. Գ. Ճիղմեճյան, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցության 1890—1925, Ֆրեզնո, 1930, էջ 2։

55 „Reports...", p. 47.

հայրենիք և եկած են մենակ»[56]։ 1908 թ. հետո ավելի շատ թվով կանայք սկսեցին մեկնել Ամերիկա։ Միայն 1908 թ. ԱՄՆ մեկնած 3299 հայ գաղթականներից 1202-ը կամ մեկ երրորդը կանայք էին[57]։

Իսկ ինչպիսի՞ն էր ԱՄՆ գաղթած հայերի սոցիալական կազմը։ Պարզվում է, որ 1899—1910 թթ. ԱՄՆ գաղթած հայերի 39,3 %-ը (7281 մարդ) որակյալ արհեստավորներ էին (մեծամասնություն էին կազմում դարբինները, կոշկակարները, դերձակները, ատաղձագործները), 23,5 %-ը (4353 մարդ) հողի մշակներ, 17,8 %-ը (3308 մարդ) բանվորներ, 17,1 %-ը (3166 մարդ) խառը զբաղմունքի տեր մարդիկ (այդ թվում առևտրականներ, գործակալներ, ծառայողներ) և մնացած 2,3 %-ը (435 մարդ) կազմում էր մտավորականությունը (ուսուցիչներ, փաստաբաններ, խմբագիրներ, երաժիշտներ, արվեստագետներ)[58], № 1 աղյուսակը ցույց է տալիս 1899—1910 թթ. ԱՄՆ գաղթած հայերի զբաղվածության տոկոսային հարաբերությունը այլ էթնիկական խմբերի հետ համեմատած[59]։

Աղյուսակ 1

Ազգությունը	Մտավորականություն	Որակյալ արհեստավոր	Հողի մշակներ	Բանվորներ	Խառը զբաղմունք
հայեր	2,3	39,3	23,5	17,8	17,1
գերմանացիներ	3,5	30,0	17,9	19,8	28,8
հույներ	,3	7,7	19,4	66,8	5,8
սկանդինավցիներ	1,2	20,5	7,6	36,2	34,5
Արևելյան Եվրոպայի հրեաներ	1,3	67,1	1,9	11,8	18,0

Պարզ երևում է, որ ԱՄՆ գաղթած հայերի մեջ որակյալ արհեստավորների և մտավորականության տոկոսը ավելի բարձր է, քան այլ էթնիկական խմբերի մոտ. միայն գերմանացիներն ու Արևելյան Եվրոպայի հրեաներն են, որ տոկոսային հարաբերությամբ գերազանցում են հայերին։ Փաստորեն, 1899—1910 թթ. ԱՄՆ գաղթած 26498 հայերից 18543-ը ուներ որևէ զբաղմունք, իսկ մնացած 7955-ը առանց զբաղմունքի մարդիկ էին, ներառյալ կանայք և երեխաները։

Հայերի մոտ բավականին ցածր էր անգրագիտության տոկոսը։ Այսպես, 1899—1910 թթ. ԱՄՆ գաղթած 14 տարեկանից բարձր տարիք ունեցող 23523 հայերից անգրագետ էին ընդամենը 5624-ը կամ 23,9 %-ը[60]։

Վիճակագրական տվյալները վկայում են, որ 1908—1910 թթ. հայ գաղթականների 79,8 %-ը (9509 մարդ) անձամբ է հայթայթել ճանապարհածախսը, 19,7 %-ը (2341 մարդ) նյութական օգնություն է ստացել բարեկամից, իսկ 0,5 %-ը (65 մարդ) այլ ճանապարհով է մուտք գործել ԱՄՆ[61]։ Հայտնի է նաև, որ ԱՄՆ գաղթած հայերի 83,9 %-ը (9998 մարդ) հանգրվանել է իր հարազատի մոտ, 14,5 %-ը (1722 մարդ)՝ ընկերոջ և միայն մի փոքր մասը՝ 1,6 %-ը (195 մարդ) մատնվել է բախտի քմահաճույքին[62]։ 1899—1910 թթ. ԱՄՆ գաղթած հայերի 5,8 %-ը կամ 1533 մարդ նախկինում եղել է ԱՄՆ-ում[63]։

56 «Արձագանք», 1891, № 50։
57 „Reports...", p. 51.
58 „Reports...", p. 95—96.
59 R. Mirak, նշվ. աշխ., էջ 73:
60 „Reports...", p. 84.
61 Նույն տեղում, էջ 360—361։
62 Նույն տեղում, էջ 363—364։
63 Նույն տեղում, էջ 359։

Հայերը ոչ միայն գաղթում էին ԱՄՆ, այլև արտագաղթում. 1908—1910 թթ. 1316 հայեր են արտագաղթել ԱՄՆ-ից[64]։

Հարկ է նշել, որ ամեն մի գաղթական, հասնելով ԱՄՆ-ի գաղթականների ընդունման կետը, ենթարկվում էր բժշկական մանրազնին քննության։ Հիվանդ կամ որևէ ֆիզիկական թերություն ունեցողները՝ տհասները, հոգեկան հիվանդները, կույրերը, անգամալույծները զրկվում էին ԱՄՆ մուտք գործելու իրավունքից։ 1897 թ. ԱՄՆ-ի առողջապահական մարմինների կողմից տրախոման՝ աչքի վարակիչ հիվանդությունը, դասվում է այն հիվանդությունների շարքին, որով տառապողների մուտքը արգելվում էր ԱՄՆ։ Ի դեպ, աչքի այս վարակիչ հիվանդությունը տարածված էր Թուրքիայից եկած հայերի շրջանում։ 1899—1910 թթ. 994 հայ գաղթականներ աչդ հիվանդության պատճառով զրկվում են ԱՄՆ մուտք գործելու իրավունքից[65]։ Անկարելի է նկարագրել գաղթականի այն դառն արցունքներն ու սրտակսկիծ ցավը, որը վաճառելով իր ունեցվածքը, կրելով զանազան դժվարություններ, հասնում էր այդ «ավետյաց երկիրը և ներս չմտած ետ ղրկվում»[66]։

Չնայած նշված և մի շարք այլ արգելքներին, ներգաղթը շարունակվում էր և միայն 1899—1917 թթ. ԱՄՆ են մուտք գործում 55 հազարից ավելի հայեր։ Ստվարացմանը զուգընթաց հայաբնակ վայրերում հիմնվում են եկեղեցիներ, հրատարակվում են թերթեր, կազմակերպվում զանազան ընկերություններ։

Վերը նշված գաղթերի հետևանքով XIX դ. վերջին XX դ. սկզբներին ԱՄՆ-ի հայկական գաղութը վերջնական ձևավորում է ստանում։

ЭМИГРАЦИЯ АРМЯН В США

ГАЯНЭ АКОПЯН

Резюме

Эмиграция армян в США берет начало с 30-х годов XIX в. Это была, в основном, армянская молодежь, которая уезжала в США на учебу. Позже часть из них обосновалась там. Число армян в США в 70—80 гг. было незначительным. В конце XIX—начале XX вв. в связи с ухудшением социально-экономического положения в Западной Армении и Турции, а также резней 1894—1896 гг. и геноцидом 1915 г. эмиграция армян в США приобретает массовый характер. Согласно статистичеоким данным, в 1899—1910 гг. в США эмигрировало 26498, а в 1911—1917 гг. —28559 армян.

64 Նույն տեղում, էջ 383։

65 Նույն տեղում, էջ 371։

66 «Հայրենիք», 1903, № 222, էջ 3։